ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 մայիսի 2026 թվականի N 825-Ա

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գավառի համայնքապետարանի՝ /այսուհետ Պատվիրատու/ և «Վերտիկալ» ՍՊԸ–ի /այսուհետ՝ Կատարող/ միջև 28.04.2026թ.կնքվել է N ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/19-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար Գավառ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագիր/այսուհետ Պայմանագիր/, որի շրջանակներում Կատարողը ստանձնել է Գավառ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն):
Համաձայն Պայմանագրի 2.4.1 կետի՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ: Սակայն 12.05.2026թ Ե-60 գրությամբ Կատարողը դիմել է Պատվիրատուին՝ հրաժարվով Ծառայությունների մատուցումից՝ խնդրելով լուծել Պայմանագիրը:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և օրենսգրքում նշված այլ հիմքերից:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված

կամ փոփոխված»: Միաժամանակ, համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:
Հաշվի առնելով վերոգրյալը, որ Կատարողը խախտել է Պայմանագրի 2.4.1 կետը, հիմք ընդունելով Կատարողի 12.05.2026թ. Ե-60 գրությունը, Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է Գավառի համայնքապետարանի և «Վերտիկալ» ՍՊԸ–ի միջև ապրիլի 28-ին կնքված ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/19-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար Գավառ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագիրը: Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի «Վերտիկալ» ՍՊԸ-ն ներկայացրել է պայմանագրի ապահովումը կանխիկ փողի ձևով լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվին վճարման կատարումը հավաստող 22.04.2026թ. N13009 վճարման հանձնարարականը, ուստի ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի 29-րդ ենթակետի ա պարբերության դրույթներով, ***որոշում եմ***

1.Միակողմանի ամբողջությամբ լուծել Գավառի համայնքապետարանի և «Վերտիկալ» ՍՊԸ–ի միջև ապրիլի 28-ին կնքված ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/19-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար Գավառ համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագիրը:
2.Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի «Վերտիկալ» ՍՊԸ-ն ներկայացրել է պայմանագրի ապահովումը կանխիկ փողի ձևով լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվին վճարման կատարումը հավաստող 22.04.2026թ. N13009 վճարման հանձնարարականը, ուստի ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի 29-րդ ենթակետի ա պարբերության դրույթներով, «Վերտիկալ» ՍՊԸ–ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց չսկսել:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. մայիսի 14
ք. Գավառ